



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի մարտին (վերլուծություն)

2017 թվականի մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 13833 գործարք, որոնց քանակը 2017 թվականի փետրվար ամսվա համեմատ աճել է 13.0 %-ով, իսկ 2016 թվականի մարտի համեմատ՝ նվազել 9.6 %-ով:

2017 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3979 օտարման գործարքի 71.9 %-ը կազմել է առուվաճառքը, 27.8 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 38.9 %-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի մարտին, 2017 թվականի փետրվարի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքն աճել է 26.0 %-ով, իսկ 2016 թվականի մարտի համեմատ՝ նվազել 5.4 %-ով:

2017 թվականի մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.4 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի մարտին, 2017 թվականի փետրվարի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 39.6 %-ով, իսկ 2016 թվականի մարտի համեմատ՝ 22.8 %-ով:

2017 թվականի մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մարտ 2016 թ.	մարտ 2017 թ.	փետրվար 2017 թ.
Կենտրոն	428000	428250	428250
Արաբկիր	357000	357000	357450
Քանաքեռ-Զեյթուն	283000	276000	280500
Նոր Նորք	253950	249000	254300
Ավան	261500	256500	261000
Էրեբունի	252300	245450	249600
Շենգավիթ	257600	250200	256300
Դավթաշեն	276550	265350	277000
Աջափնյակ	250850	247100	249850
Մալաթիա-Սեբաստիա	243950	238000	242500
Նուբարաշեն	157200	157700	157700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի մարտին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել է 1.4%-ով:

2017 թվականի մարտին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 345 բնակարան, որոնց քանակը 2017 թվականի փետրվարի համեմատ աճել է 12.4 %-ով, իսկ 2016 թվականի մարտի համեմատ՝ 0.9 %-ով:

2017 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մարտ 2016 թ.	մարտ 2017 թ.	փետրվար 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116050	112000	116000
	Ապարան	58350	58800	58800
	Թալին	66700	63500	66700
Արարատ	Արտաշատ	98700	96000	99150
	Մասիս	115800	113000	115700
	Վեդի	101700	101600	101600
Արմավիր	Արարատ	77400	77850	77850
	Վաղարշապատ	154200	154000	154000
	Արմավիր	121250	121100	121100
Գեղարքունիք	Մեծամոր	87600	86000	87450
	Սևան	99400	88300	99300
	Գավառ	60500	59000	60800
	Մարտունի	107700	101100	107650
	Վարդենիս	45200	45400	45400
Լոռի	Ճամբարակ	28750	28800	28800
	Վանաձոր	88600	88600	88600
	Ստեփանավան	74750	74900	74900
	Սպիտակ	99850	95000	99950
	Ալավերդի	55700	55950	55950
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
Կոտայք	Ախթալա	20500	20500	20500
	Աբովյան	155150	153000	155100
	Նոր Հաճն	128550	127000	128500
	Բյուրեղավան	108250	103000	108200
	Եղվարդ	109750	108000	110050
	Հրազդան	63900	62000	63900
	Ծաղկաձոր	292400	292400	292400
Շիրակ	Չարենցավան	85500	83000	85500
	Գյումրի	109350	109400	109400
	Արթիկ	67200	67600	67400
Սյունիք	Մարալիկ	41000	41150	41150
	Գորիս	123600	124200	124200
	Կապան	94900	95900	95900
	Սիսիան	92100	91000	92350
	Մեղրի	82900	84500	83750
	Քաջարան	94750	96000	95100
Վայոց ձոր	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	95100	93000	95000
	Եղեգնաձոր	126150	126400	126400
Տավուշ	Ջերմուկ	113200	112000	113100
	Դիլիջան	115300	114000	115700
	Իջևան	118550	115000	118600
	Բերդ	60450	60600	60600
	Նոյեմբերյան	50350	50600	50600
	Այրում	31850	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով,

շուկայական միջին գները 2017 թվականի փետրվարի համեմատ համեմատ՝ նվազել է 1.5%-ով:

2017 թվականի մարտին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 357 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 101 գործարք, մարզերում՝ 256 գործարք: 2017 թվականի մարտին, 2017 թվականի փետրվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակն աճել է 17.0 %-ով, ընդ որում, Երևանում՝ 21.7 %-ով, իսկ մարզերում՝ 15.3 %-ով: 2017 թվականի մարտին 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ աճել 8.6 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 5.2 %-ով:

2017 թվականի մարտին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մարտ 2016 թ.	մարտ 2017 թ.	փետրվար 2017 թ.
Կենտրոն	476100	476350	476350
Արաբկիր	383000	383000	383200
Քանաքեռ-Զեյթուն	295000	290000	295300
Նորք-Մարաշ	319200	310000	318100
Ավան	270500	267000	269950
Էրեբունի	239750	239000	239900
Շենգավիթ	255000	250000	252900
Դավթաշեն	276000	272000	274900
Աջափնյակ	250050	248000	250300
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի մարտին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել է 0.8%-ով:

2017 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մարտ 2016 թ.	մարտ 2017 թ.	փետրվար 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	135000	136150

	Ապարան	60050	60000	60000
	Թալին	69250	68000	69200
Արարատ	Արտաշատ	100000	100100	100100
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
	Վաղարշապատ	153100	153150	153150
Արմավիր	Արմավիր	107000	107000	107000
	Սևան	94950	94950	94950
Գեղարքունիք	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96200	96200
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	31100	31100
	Վանաձոր	100900	100000	100900
Լոռի	Ստեփանավան	91200	90000	91200
	Սպիտակ	114000	113000	114050
	Ալավերդի	50200	50300	50300
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
	Աբովյան	157300	157350	157350
Կոտայք	Նոր Հաճն	129800	129000	129800
	Բյուրեղավան	120500	118000	120500
	Եղվարդ	116100	114000	116100
	Հրազդան	82600	79000	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	80000	83000
	Գյումրի	119250	119200	119200
Շիրակ	Արթիկ	63450	63400	63400
	Մարալիկ	52000	52000	52000
	Գորիս	130000	130050	130050
Սյունիք	Կապան	100650	100750	100750
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84600	85000	85000
	Դաստակերտ	11610	11610	11610
	Վայք	90150	88000	90150
Վայոց ձոր	Եղեգնաձոր	116750	115000	116750
	Ջերմուկ	131300	130000	131300
	Դիլիջան	115550	115900	115900
Տավուշ	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի փետրվարի համեմատ՝ նվազել է 0.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի մարտին հանրապետությունում օտարվել է 1279 միավոր (622.33 հա) հող, որից Երևանում՝ 103 միավոր (10.68 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 732 միավոր (572.88 հա), որից Երևանում՝ 14 միավոր (2.55 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 364 միավոր (31.41 հա), որից Երևանում՝ 34 միավոր (1.66 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 138 միավոր (9.01 հա), որից Երևանում՝ 52 միավոր (5.86 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 18 միավոր (4.19 հա), որից Երևանում՝ 3 միավոր (0.61 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 8 միավոր (1.91 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 18 միավոր (2.73 հա),
- ջրային հող՝ 1 միավոր (0.20 հա) մակերեսով:

2017 թվականի մարտին հանրապետությունում օտարված հողերից 995 միավորի (506.81 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 89 միավոր (8.52 հա), նվիրատվության գործարք՝ 279 միավորի (115.09 հա), որից Երևանում՝ 14 միավոր (2.16 հա) և փոխանակության գործարք՝ 5 միավորի (0.43 հա):

Հանրապետությունում 2017 թվականի մարտին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 25.5 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 28.5 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 8.7 %-ով արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 41.7 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 121.46 հա, որից 117.82 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 21.5 %-ը կամ 214 միավորը (191.07 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 24 միավոր (0.17 հա), իսկ 77.4 %-ը կամ 770 միավորը (314.23 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 65 միավոր (8.35 հա): 2017 թվականի մարտին հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 11 գործարք (1.51 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2017 թվականի մարտին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	0	0.00	7	0.04	17	0.13	9	2.17	3	0.61	23	1.30	30	4.26
Արագածոտն	27	64.88	0	0.00	0	0.00	0	0.00	63	30.24	0	0.00	11	0.97	0	0.00
Արարատ	5	13.96	1	0.03	8	0.74	6	0.09	91	37.77	1	0.29	49	4.46	2	0.02
Արմավիր	16	25.61	0	0.00	1	0.01	7	0.04	95	92.21	1	0.01	33	3.55	2	0.02
Գեղարքունիք	0	0.00	1	0.39	0	0.00	3	0.11	9	19.81	2	0.11	16	2.12	3	0.18
Լոռի	5	10.88	0	0.00	2	0.01	3	0.46	64	33.09	1	0.02	3	0.32	4	0.18
Կոտայք	29	48.06	0	0.00	18	0.99	16	0.80	61	29.63	0	0.00	56	4.11	7	0.04
Շիրակ	1	9.50	0	0.00	8	0.45	1	0.08	29	22.61	0	0.00	22	1.76	4	0.16
Սյունիք	0	0.00	1	0.01	0	0.00	1	0.01	15	8.97	0	0.00	12	0.72	1	0.01
Վայոց ձոր	5	6.91	0	0.00	0	0.00	1	0.01	7	1.85	1	0.04	4	0.93	2	0.01
Տավուշ	4	3.33	5	2.63	1	0.12	8	0.09	23	8.98	0	0.00	7	0.46	3	0.17
Ընդամենը	92	183.13	8	3.06	45	2.36	63	1.82	466	287.33	9	1.08	236	20.70	58	5.05

Ստորև ներկայացված է 2017 թվականի մարտին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	22	0.15	0	0.00	7	0.04	15	0.11	2	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.02
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	27	64.88	27	64.88	0	0.00	0	0.00	0	0.00
Արարատ	3	0.035	1	0.03	0	0.00	2	0.005	17	14.78	5	13.96	0	0.00	8	0.74	4	0.08
Արմավիր	3	0.02	0	0.00	0	0.00	3	0.02	21	25.64	16	25.61	0	0.00	1	0.01	4	0.02
Գեղարքունիք	1	0.10	0	0.00	0	0.00	1	0.10	3	0.40	0	0.00	1	0.39	0	0.00	2	0.01
Լոռի	2	0.282	0	0.00	1	0.002	1	0.28	8	11.07	5	10.88	0	0.00	1	0.01	2	0.18
Կոտայք	11	0.24	0	0.00	8	0.22	3	0.02	51	49.48	28	47.93	0	0.00	10	0.77	13	0.78
Շիրակ	3	0.01	0	0.00	3	0.01	0	0.00	7	10.02	1	9.50	0	0.00	5	0.44	1	0.08
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.02	0	0.00	1	0.01	0	0.00	1	0.01
Վայոց ձոր	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	5	6.91	5	6.91	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	4	0.01	0	0.00	0	0.00	4	0.01	14	6.16	4	3.33	5	2.63	1	0.12	4	0.08
Ընդամենը	50	0.86	1	0.03	19	0.27	30	0.56	157	189.38	91	183.00	7	3.03	26	2.09	33	1.26

2017 թվականի մարտին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք (0.12 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի մարտին, 2016 թվականի մարտի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 8.7 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 71.4 %-ով, իսկ մարզերում աճել է 12.7 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 15.2 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 10.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 40.0 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի մարտին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	23	63.11	76.8	451.8	270.1	24	9.24	365.0	12000.0	3364.0
Ապարան	4	1.76	70.1	70.1	70.1	9	4.24	86.5	2727.3	635.0
Թային						27	13.42	93.6	5494.5	670.8
Ծաղկահովիտ						3	3.34	79.5	1000.0	435.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	3.00	70.9	70.9	70.9	50	14.65	335.1	10833.3	2687.6
Մասիս						15	7.06	200.0	11904.8	3406.2
Վեդի	4	10.96	60.0	102.6	88.5	25	15.82	207.0	10795.1	2010.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	2.47	63.2	1522.7	377.4	38	20.03	294.3	9090.0	1482.3
Բաղրամյան	10	22.97	72.5	1250.0	784.3	33	61.50	90.6	2561.1	845.1
Վաղարշապատ	1	0.17	492.2	492.2	492.2	23	10.18	444.4	11764.7	2018.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								199.8	1875.0	531.5
Ճամբարակ								60.5	953.3	352.0
Մարտունի						2	0.19	51.1	2850.0	750.0
Սևան								52.2	2134.8	360.0
Վարդենիս						6	15.92	41.2	2575.1	352.0
Լոռու մարզ										
Ալավերդի	3	1.53	2442.0	5000.0	3311.0	3	0.85	170.4	6424.2	550.0
Գուգարք						5	1.70	234.6	6065.9	825.0
Սպիտակ	1	1.00	278.0	278.0	278.0			250.0	5555.5	675.0
Ստեփանավան	1	8.35	483.1	483.1	483.1			90.6	1686.6	410.0
Տաշիր						53	28.79	45.3	1384.4	187.5
Կոտայքի մարզ										
Արույան	13	16.93	90.7	2247.2	598.2	22	13.25	279.3	11942.7	3987.0
Եղվարդ	5	2.09	677.8	990.2	927.7	30	9.33	174.4	11971.8	2613.0
Հրազդան	10	28.92	101.0	841.9	191.6	8	6.53	130.5	10256.4	1085.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	3.42	252.0	1693.1	697.7
Ամասիա								40.9	261.0	143.5
Անի						6	5.20	110.6	546.9	467.0
Աշոցք								58.5	215.8	142.0
Արթիկ	1	9.50	958.0	958.0	958.0	17	13.51	79.4	1428.6	562.6

Սյունիքի մարզ										
Գորիս						4	0.62	92.6	1023.2	710.0
Կապան								120.0	841.6	462.5
Մեղրի						1	0.14	193.0	3000.0	832.0
Սիսիան						10	8.21	46.3	1977.4	547.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	6.91	31.2	392.5	124.8	6	1.60	125.0	10000.0	1774.5
Վայք						1	0.24	58.8	1430.7	630.0
Տավուշի մարզ										
Բերդ						3	1.50	213.3	3783.8	720.0
Իջևան	4	3.33	154.7	473.7	314.2	8	1.27	267.5	9454.5	1635.0
Նոյեմբերյան						12	6.21	46.7	7368.4	1010.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի մարտին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						8	5058.0	130.7	22200.0	2587.0
Ապարան						2	3558.0	124.1	609.6	389.5
Թալին								63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	8	7372.9	379.8	851.6	752.7	15	14186.0	173.9	7140.3	902.5
Մասիս						18	15781.7	187.5	25000.0	1205.8
Վեդի						15	13865.0	126.1	5000.0	663.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	149.0	376.5	376.5	376.5	8	9986.0	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						2	2400.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						22	22509.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	1299.0	186.6	1084.3	683.8
Ճամբարակ						1	2373.0	71.3	2286.2	147.0
Մարտունի						8	9115.0	119.3	5000.0	278.0
Սևան						3	4410.0	240.0	3110.4	347.0
Վարդենիս						2	4031.0	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	61.7	3063.2	3063.2	3063.2	1	800.0	114.3	1388.9	217.0
Գուգարք						1	980.0	77.9	14083.3	1259.0
Սպիտակ								104.9	1348.3	198.3
Ստեփանավան						1	1400.0	88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	5209.0	245.8	2371.4	826.9	33	22587.4	264.5	35353.5	1956.5
Եղվարդ	3	1635.6	1617.0	4564.5	2931.4	21	16794.5	173.6	27000.0	2854.0
Հրազդան	2	882.9	1519.5	3234.0	2376.7	1	799.0	117.7	34848.5	1317.7

Շիրակի մարզ										
Ախուրյան						8	8170.8	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						2	2951.4	67.9	180.6	218.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	5	4366.4	183.0	580.8	501.2	12	6469.0	111.8	5000.0	217.5
Սյունիքի մարզ										
Գորիս						4	2519.2	112.2	1700.0	369.0
Կապան						1	600.0	67.9	2638.9	370.0
Մեղրի								68.5	632.9	270.0
Սիսիան						7	4068.0	123.5	875.0	263.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	9304.9	96.7	7659.6	508.0
Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						3	1914.0	75.8	810.0	131.0
Իջևան	1	1200.0	159.5	159.5	159.5	3	2693.0	74.1	14423.1	495.0
Նոյեմբերյան						1	21.3	125.0	1948.1	259.0

2017 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 721 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.2 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 79.9 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականի մարտին, 2017 թվականի փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 33.5 %-ով, իսկ 2016 թվականի մարտի համեմատ՝ 2.3 %-ով:

2017 թվականի մարտին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 41 բնակարանի, 37 անհատական բնակելի տան, 335 հասարակական և 69 արտադրական նշանակության օբյեկտի, 218 հողի և 21 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի մարտին հանրապետությունում վարձակալված 1797.88 հա հողից 0.69 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 1797.19 հա հողերից 816.31 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 962.98 հա արդյունաբերական օբյեկտների, 0.30 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Վայոց ձորի մարզում՝ 511.96 հա, որից 498.31 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2121 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 15.3 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի փետրվարի համեմատ, աճել է 32.6 %-ով, իսկ 2016 թվականի մարտի համեմատ՝ 18.8 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (50.3 %), անհատական բնակելի տների (22.1 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.3 %) և հողերի (10.5 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1169 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017

թվականի փետրվարի համեմատ աճել է 32.4 %-ով, իսկ 2016 թվականի մարտի համեմատ՝ 24.9 %-ով:

2017 թվականի մարտին հանրապետությունում գրավադրվել է 1181.14 հա հող, որից 12.57 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 401.69 հա կամ 34.0 %-ը գյուղատնտեսական նշանակության, որից 0.26 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Վայոց ձորի մարզում՝ 514.65 հա արդյունաբերական օբյեկտների:

2017 թվականի մարտին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 170 գործարք: 2017 թվականի մարտին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի փետրվարի համեմատ, աճել է 44.1%-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 24.1 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 122 գործարք, որը 2017 թվականի փետրվարի համեմատ, աճել է 43.5 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 25.8 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի փետրվարի համեմատ, աճել է 45.5 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 20.0 %-ով:

2017 թվականի մարտին հանրապետությունում արձանագրվել է 2011 առաջնային գրանցում, որոնց քանակը, 2017 թվականի փետրվարի համեմատ, նվազել է 4.9 %-ով, իսկ 2016 թվականի մարտի համեմատ՝ աճել 0.3 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 14.5 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (16.7%):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե